Հաստատված է
ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի
2023թ. հունվարի 21-ի նիստի
N 2 որոշմամբ
ԳՊՀ ՀԽ նախագահ՝ Է. Ղազարյան

‹‹ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ›› ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳԻՐ (2023-2027 ԹԹ.)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի (ԳՊՀ, Համալսարան) 2023-2027 թվականների հակակոռուպցիոն ծրագիրը հիմնված է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն օրենսդրության պահանջների վրա և համապատասխանում է Համալսարանի 2023-2027 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի դրույթներին:

I. Համալսարանի հակակոռուպցիոն ծրագրի նպատակները

1) Համալսարանի հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական սկզբունքների և ուղղությունների ամրագրում,
2) ԳՊՀ հակակոռուպցիոն միջոցառումների նախատեսում, ակնկալվող արդյունքների հստակեցում,
3) ուսանողների, դասախոսների, բոլոր տարակարգերի աշխատակիցների իրավունքների պաշտպանությանը նպաստում:

II. Համալսարանի հակակոռուպցիոն ծրագրի խնդիրները

1) Համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում հակակոռուպցիոն կառուցակարգերի արդյունավետության բարձրացում,

2) ընդհանուր և մասնագիտական բարեվարքության կանոնների շարունակական կիրառում,

3) կոռուպցիոն երևույթների ու վտանգների կանխում:

III. Համալսարանի հակակոռուպցիոն ծրագրի հիմնական սկզբունքները

1) Օրինականություն, հրապարակայնություն և հաշվետվողականություն Համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում,

2) մարդու՝ որպես բարձրագույն արժեքի իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության հարգում և օրենքով սահմանված կարգով պաշտպանության ապահովում,

3) իրավահավասարություն՝ օրենքի առջև Համալսարանի բոլոր ուսանողների, դասախոսների, տարբեր տարակարգերի աշխատակիցների հավասարություն,

4) Համալսարանի ղեկավար կազմի, կառուցվածքային ստորաբաժանումների բարոյական և իրավական պատասխանատվություն ԳՊՀ հակակոռուպցիոն ծրագրի իրականացման և դրանց արդյունավետության ապահովման համար:

IV. Համալսարանի հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ուղղությունները

1) ուսումնական գործընթացի բոլոր փուլերում հնարավոր կոռուպցիոն ռիսկերի կանխատեսում, օբյեկտիվ գնահատում և դրանց նվազեցմանն ու հաղթահարմանն ուղղված միջոցների ձեռնարկում,

2) ակադեմիական ազնվության նորմերի և բարեվարքության կանոնների անշեղ իրագործում,

3) կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողականության դրսևորում, կոռուպցիայից զերծ կրթական միջավայրի պահպանում,

4) Համալսարանում որոշումների ընդունման գործընթացում ժողովրդավարական սկզբունքների պահպանում, որոշումների, հրամանների և կարգադրությունների հստակ կատարում, Համալսարանում ուղղահայաց՝ ներքևից վերև և վերևից ներքև, ինչպես նաև հորիզոնական ուղղություններով համագործակցության, հաշվետվողականության և հսկողության կառուցակարգերի կատարելագործում,

5) ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության ակտիվացում, նրանց դերի բարձրացում ուսանողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության գործում, հակակոռուպցիոն միջոցառումներում մասնակցության ապահովում:

V. Համալսարանի հակակոռուպցիոն միջոցառումները

1) Համալսարանում թափանցիկ և հաշվետու վարչարարության շարունակական բարելավում, ‹‹միջնորդ›› օղակների դերակատարության բացառում, ուսանողների, ծնողների, դասախոսների, այլ ներքին ու արտաքին շահառուների հարցերին, ստացված բողոքներին, բողոքարկումներին օպերատիվ ու արագ արձագանքում:

2) Կոռուպցիոն վտանգների բացահայտման և կանխարգելման նպատակով խիստ հսկողության իրականացում հետևյալ գործընթացների նկատմամբ.

ա/ ուսանողների ընդունում, կցագրում, փոխադրում, տարկետում, ազատում, հեռացում, վերականգնում,

բ/ ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ քննությունների կազմակերպում և անցկացում,

գ/ անվճար և վճարովի ուսուցման տեղերի փոխատեղումների իրականացում,

դ/ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստում, պաշտպանության կազմակերպում, ամփոփիչ ատեստավորում,

ե/ ուսանողների ուսման վարձավճարների զեղչերի կիրառում, սոցիալական աջակցության ծրագրերի իրականացում,

զ/ դասախոսների և այլ տարակարգերի աշխատակիցների աջակցություն ու խրախուսում,

է/ կրթության առաջին մակարդակից՝ բակալավրիատից, ուսանողների անցում հաջորդ մակարդակ՝ մագիստրատուրա,

ը/ ուսանողների ներբուհական և միջբուհական տեղափոխություններ,

թ/ ուսանողների ակադեմիական շարժունության ծրագրերի իրականացում,

ժ/ ֆինանսատնտեսական գործունեություն, գնումներ,

ժա/ համալսարանական այլ գործընթացներ:

3) Համալսարանի գործունեության վերաբերյալ բաց տեղեկատվության լիարժեք հասանելիության ապահովում ԳՊՀ համացանցային՝ www.gsu.am կայքի միջոցով և այլ ձևերով, տեղեկատվության տրամադրման պատասխանատուների, ընթացակարգերի և ժամկետների հստակ սահմանում, դրանց խախտումների համար պատասխանատվության համարժեք միջոցների նախատեսում և կիրառում:

4) Համալսարանում անանուն հարցումների և գնահատումների իրականացում, անցանց և առցանց քվեարկությունների և քննարկումների կազմակերպում, առաջարկությունների քննարկման և հարցերի լուծման տարբերակների ներկայացման, որոշումների մասնակցային ընդունման արդյունավետ կառուցակարգերի կիրառում:

5) Ուսումնական գործընթացի կազմակերպման կառուցակարգերի շարունակական բարելավում, բոլոր փուլերի պատշաճ վերահսկողության և մշտադիտարկման ապահովում:

6) Ուսանող-դասախոս փոխհարաբերությունների արդյունավետության բարձրացում, փոխադարձ հարգանքի վրա խարսխված ուսումնական և աշխատանքային մթնոլորտի ապահովում:

7) Համալսարանի ուսանողների շրջանում առողջ մրցակցային միջավայրի պահպանում, անվճար և վճարովի հիմունքներով սովորող ուսանողների փոխատեղման իրականացում արդարության, օբյեկտիվության և հրապարակայնության սկզբունքներով:

8) Ուսանողների միջավայրում օրինականության, ժողովրդավարության, սոցիալական արդարության, ակադեմիական ազատության և ազնվության սկզբունքների խորքային ընկալման և կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքի արմատավորում, կրթական գործընթացի՝ կոռուպցիոն վտանգներ պարունակող փուլերի նկատմամբ ուսանողական վերահսկողության իրականացում, ուսանողների հակակոռուպցիոն ներուժի օգտագործում:

9) Համալսարանի կորպորատիվ արժեհամակարգի, գաղափարախոսության, սկզբունքների և ազնիվ աշխատառճի ամրապնդում, ներհամալսարանական հարաբերությունները կարգավորող ակտերի բարելավում, ծագած խնդիրների արդարացի և օպերատիվ լուծում:

10) Համալսարանի աշխատակիցների պաշտոնների անձնագրերի և աշխատանքի նկարագրերի վերանայում և հստակեցում:

11) Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների հստակեցում, աշխատակիցների աշխատանքային կարողությունների զարգացում:

12) Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից հիմնավորված և արժանահավատ հաշվետվությունների պարբերաբար ներկայացում, նրանց գործունեության արդյունավետության, թափանցիկության և հրապարակայնության ապահովում:

13) Համալսարանի ֆինանսական գործունեության, ծախսերի կատարման, գնումների իրականացման գործընթացների օրինականության, թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության ապահովում:

14) Համալսարանի ներքին վերահսկողության կառուցակարգերի կիրառում, ֆինանսական հաշվետվությունների արտաքին աուդիտի իրականացում, աուդիտորական եզրակացությունից բխող անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկում:

15) Համալսարանի ուսանողներից, ծնողական համայնքից, այլ անձանցից տեղեկատվության ստացում ու վերլուծություն, եզրահանգումների կատարում և համապատասխան միջոցների ձեռնարկում, հետադարձ կապերի ակտիվացման նոր կառուցակարգերի ներդրում:

16) Ստացված յուրաքանչյուր ահազանգին օպերատիվ արձագանքում, ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգով անընդունելի համարվող արարքների բացահայտում ու կանխում:

17) Համալսարանում կատարողական կարգապահության, աշխատանքային բարեխղճության և պատասխանատվության բարձրացում:

18) Համալսարանի վարչական, պրոֆեսորադասախոսական անձնակազմի բոլոր անդամների և ուսանողների կողմից ԳՊՀ էթիկայի կանոնների պահպանումը գնահատող կառուցակարգերի կատարելագործում, անթույլատրելի արարքների կանխում, դրանց անցանկալի հետևանքների պարզաբանում և վերացում:

19) ՀՀ օրենսդրությամբ կոռուպցիոն որակվող իրավախախտումների դեպքում կարգապահական և վարչական պատասխանատվության համարժեք միջոցների կիրառում, իսկ կոռուպցիոն հանցագործությունների դեպքում՝ քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով դիմում իրավասու մարմիններին:

20) Համալսարանի առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում ուսանողների և դասախոսների, բոլոր աշխատակիցների հակակոռուպցիոն իրազեկության մակարդակի բարձրացում, կոռուպցիայի հասկացության, էության, պատճառների ու պայմանների, սուբյեկտների, հետևանքների, կոռուպցիոն երևույթների կանխարգելման թեմաներով ուսուցման կազմակերպում:

21) ԳՊՀ դասախոսների և ուսանողների ուժերով հանրային իրազեկման ապահովում, ՄԱԿ-ի՝ Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերի դրույթների, ՀՀ հակակոռուպցիոն օրենսդրության նորմերի հանրամատչելի ներկայացում ու պարզաբանում, մասնակցություն կոռուպցիայի դեմ պայքարին նվիրված գիտաժողովների, սեմինարների ու քննարկումների:

22) Համալսարանում գրագողության կանխում:

23) Ուսանողների շրջանում կոռուպցիոն դրսևորումների բացահայտմանն ուղղված անանուն հարցումների անցկացման մեթոդաբանության ու ընթացակարգերի կատարելագործում:

24) Համալսարանի կանոնակարգերի և ընթացակարգերի, բուհական գործընթացների բոլոր փուլերի հակակոռուպցիոն փորձաքննության անցկացում, ԳՊՀ ակտերի նախագծերի հրապարակում Համալսարանի համացանցային կայքի ‹‹Նախագծեր›› բաժնում և դրանց անցանց ու առցանց քննարկումների կազմակերպում, արդյունքների հաշվի առնում:

25) ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքի պարբերական մշտադիտարկում և գնահատում՝ առաջացած խնդիրներն ու վտանգները բացահայտելու և կանխելու նպատակով:

26) Կրթության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային փորձի ուսումնասիրում, վերլուծություն և տեղայնացում, կոռուպցիայի կանխարգելման ընդունված գործիքների հետևողական կիրառում:

27) Հանրապետական և մարզային ԶԼՄ-ների հետ Համալսարանի արտաքին կապերի և լրատվության բաժնի համագործակցության ակտիվացում, հասարակության մեջ ԳՊՀ-ի՝ որպես հակակոռուպցիոն պայքարի ջատագով բուհի նկատմամբ վստահության ամրապնդում: